

## S. ԻՍԱԳԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐԵԱՆ

(1918 – 1985)

23 Յունիս, Կիրակի օր, Լու Անճելըսի մէջ իր աչքերը յափառենապէս փակեց Հայց. Եկեղեցւոյ զարգացած ու նույիրեալ մշակներէն Տ. Խանճակ Շ. Վրդ. Ղազարեանը, իրը հետեւանք կոկորդի բաղդկերի: Տարիին էր 67:

Հանգուցնալ Հայրը ծնած էր 1918ին՝ Կրուսաղէմ գալով՝ աշակերտած է Փառ. Վարժարանին: 1938ին ծեռնագրուած է Սարկաւագ՝ Հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարքէն, իսկ 1941ին, Ընծայարանի եռամեայ ընթացքը աւարտելէ յետոյ՝ կուսակրօն Քահանայ՝ Հոգելոյս Տ. Մեսրոպ Պատրիարքէն, որ իր Դրանիկ (= Անդրանիկ) անունը փոխած է Խանճակի:

Այսուհետեւ, աւելի քան բառապուն տարիներու ընթացքին, Հայր Խանճակ ունեցած է բազմերես ու արդիւնաշու գործունէութիւն, թէ՛ հովուական եւ թէ՛ կրթական մարզերու մէջ: Նախ կը զրկուի Անթիկիաս, իրը փոխս-տեսուչ Ընծայարանին: Եթոյ կ'անցնի Ամերիկա, ուր տասնամեակ մը կը վարէ հովուական պաշտօններ: 1956ին կու գայ Երուսաղէմ, ուր կը մնայ Կարճ ատեն մը եւ մաս կը կազմէ «Ամիոն»ի և մրագրութեան: Եթոյ զինք կը տեսնենք Աթէնք, իրը Առաջնորդական Տեհապահ Յունահայոց: Ատեն մը վերջ կ'անցնի Խոտալիա, իրը Հոգիւ Միլանույի հայ համայնքին: Եթոյ գարձեալ Ամերիկա: 1970ական թուականներուն եգիպտոս է, իրը Առաջն. Փոխանորդ Աղեքսանդրիոյ: Եթոյ կը մեկնի Միլանու Նահանգներ՝ դարմանումի:

Իրը մտքի մարդ, մեզի ժառանգ թողած է քանի մը երկեր: Նախ փորձած է քանաստեղծութիւնը: Իրմէ ունինք, «Եղտիշատ» ծածկանուով եւ «Ամստելկ Տաւիղ» խորագրով, գրքոյ մը: Իսկ իր արձակ գործերէն են «Դէմբեր» որոնց հետ դէմ առ դէմ եկայ», Վահան Թէքէնանի մասին մենագրութիւն մը եւ Պղատոնի «Հողին Անմահ»ի թարգմանութիւնը: Աշխատակցած է «Ամիոն»ին, ինչպէս նաև արտասահմանի մեր մամուլին, մասնաւորաբար «Արեւելին: Մեծ հիացող մը եղած է իր ուսուցիչներէն Յ. Օշականի, բայց մանաւանդ Շահան Պէրպէրեանի: (Այդ մասին խօսած ենք «Ամիոն»ի այս էջերէն, իրը քանի մը ամիսներ առաջ իր հատորը կը քրախօսէինք:) Այդ երկու քին նման, իր ալ կեանը չեղաւ երկար (թիւովք Թէքէնանի տարիներուն):

Երջանիկ զուգավիպութեամբ մը, Հայրսուրբին յուղարկաւորութիւնը կատարուած է իր անուան տօնին օրը — Ս. Սահակ և Ս. Մեսրոպ — Եղ., 27 Յունիսին: Տէրը թող իր լոյսերուն մէջ ընդունի իր վաստակաւոր պաշտօնէի հոգին:

Ապա ընդհանուր ժողովի օրակարգին համածայն կատարուեցաւ Առաջնորդական ընտրութիւնը Հարաւային Ֆրանսայի վիճակին, որուն իրեւ Առաջնորդ ընտրուեցաւ Գերշ. Տ. Յակոբ Եպոս. Վարդանեան:

Գերաշնորհ Սրբազն Հօր ընտրութիւնն ու կանոնագրի մէկ օրինակը ընդհանուր ժողովի զիւանին ստորագրութեամբ յղուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Վազգէն Ա-ին առ ի գաւերացում:

Ի դիմաց Հարաւային Ֆրանսայի  
Հայց. Առաքելական Եկեղեցիներու վերին իշխանութեան  
ղիւանին

Ատենադպիր ՅԱԿՈԲ ԷՄԳԻՃԵԱՆ	Ատենապետ ՄԻՀՐԱՆ ՊՈՅԱՃԵԱՆ
-----------------------------	-----------------------------